

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ 2015Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կոտայքի մարզի մշտական բնակչության թվաքանակը 2015թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 254900 մարդ, որը հանրապետության ողջ բնակչության 8.5%-ն է, որից 138500-ը քաղաքաբնակներ են (54.3%), 116400-ը՝ գյուղաբնակներ (45.7%): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բնակչության թվաքանակն աճել է 1100-ով:

2015թ. առաջին կիսամյակում մարզում ծնվածների թիվը կազմել է 1695 մարդ կամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 25-ով պակաս, մահացածների թիվն ավելացել է 40-ով՝ կազմելով 1265: Բնական աճը կազմել է 430 մարդ:

Գրանցված ամուսնությունների թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պակասել է 120-ով՝ կազմելով 753, իսկ ամուսնալուծությունների թիվը նվազել է 9-ով՝ կազմելով 174:

2015թ. առաջին կիսամյակում մարզի արտադրական ձեռնարկությունների կողմից թողարկվել է 50.5 մլրդ. դրամի արդյունաբերական արտադրանք՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 68.3 մլրդ. դրամի դիմաց կամ ծավալները նվազել են 26.0%-ով: Արդյունաբերական արտադրանքի ծավալի նվազումը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ էլեկտրաէներգիայի արտադրության ծավալների նվազմամբ՝ ավելի քան 11.5 մլրդ. դրամով, կամ արտադրվել է 12.5 մլրդ. դրամի չափով էլեկտրաէներգիա: Մշակող արդյունաբերության ցուցանիշը կազմել է 34.3 մլրդ. դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի համեմատ պակաս է 4.0 մլրդ. դրամով: Իսկ հանքագործական արդյունաբերության ոլորտում գրանցվել է աճ 191.0 մլն. դրամի չափով՝ թողարկվել է 858.2 մլն. դրամի արտադրանք: Հաշվետու ժամանակահատվածում նվազում է գրանցվել սննդի (3.3%), խմիչքների (39.7%) արտադրության բնագավառներում, իսկ աճ գրանցվել է դեղագործական ապրանքների (9.1%), հիմնային մետաղների (8.9%), այլ ոչ մետաղական արտադրատեսակների (8.6%) արտադրությունում:

2015թ. առաջին կիսամյակի ընթացքում մարզում արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալը կազմել է 50.1 մլրդ. դրամ՝ նախորդ տարվա 68.3 մլրդ. դրամի դիմաց կամ այն նվազել է 26.6 %-ով:

2015թ. հաշվետու ժամանակաշրջանում արտադրանքի իրացումը ներքին շուկայում կազմել է 41.1 մլրդ. դրամ, իսկ արտահանումը՝ 9.0 մլրդ. դրամ, որից ԱՊՀ երկրներ է արտահանվել 7.0 մլրդ. դրամի և այլ երկրներ՝ 2.0 մլրդ. դրամի արտադրանք: 2015թ. առաջին կիսամյակում արտադրանքի արտահանման ծավալը 2014թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 53.3 %-ով:

մլն. դրամ

	2015թ. I կիսամյակ	2014 թ. I կիսամյակ	շեղում +/-	%
Թողարկված արտադրանքի ծավալը	50508.0	68276.4	-17768.4	74.0
Արտադրանքի իրացման ծավալը	50103.0	68279.4	-18176.4	73.4
Արտահանման ծավալը, որից՝	9035.6	19340.5	-10304.9	46.7
ԱՊՀ երկրներ	7052.5	13334.2	-6281.7	52.9
այլ երկրներ	1983.1	6006.3	-4023.2	33.0

2015թ. առաջին կիսամյակում մարզում կատարվել են 10102.6 մլն. դրամի կապիտալ ներդրումներ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 2394.4 մլն. դրամով և կազմել հանրապետությունում իրականացված կապիտալ ներդրումների 7.5 %-ը:

Հաշվետու ժամանակահատվածում արտադրվել է 2.9 հազ. տոննա միս նախորդ տարվա 3.6 հազ. տոննայի դիմաց, ինչը կազմել է նախորդ տարվա առաջին կիսամյակում արտադրված մսի 80.6%-ը: Կաթի արտադրության ծավալն ավելացել է 8.4%-ով կամ արտադրվել է 38.7 հազ. տոննա կաթ, ձվի արտադրության ծավալը հասել է 70.6 մլն. հատի, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի համեմատ ավել է 3.8%-ով:

Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը 2015թ. առաջին կիսամյակում կազմել է 20.8 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 11.2 %-ով:

Իսկ բնակչությանը մատուցած ծառայությունների ծավալը կազմել է 25.1 մլրդ. դրամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 18.1 մլրդ. դրամի դիմաց կամ գրանցվել է 38.7 % աճ:

2015թ. հուլիսի 1-ի դրությամբ մարզում գրանցված գործազուրկների թիվը կազմել է 7426 մարդ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 1226-ով: